

մաւ, մանաւանդ զի եւ զայլս¹ յերկուանալոյ եւ դարձուցանելոյ յետս, որք երկնից բարութեանց ցանկացեալք էին²՝ անդէն ի փախուստ դարձեալ կորնչէին զյաւիտենից կորուստն: 6 Եւ տեսեալ զաւրացն Պարսից զգունդն Հայոց լքեալս եւ պարտասեալս առ ի կոտորել զազգն իւրեանց, հայեցեալ եւ յայն եւս, զի փախուցեալ³ երթային զաւրքն Հայոց՝ ի մէջ առեալ շուրջ զնաւքաւք պատեալ ծովանային. ուր եւ ցանկալի խնդրոյն դիպեալք՝ կատարէին այնոքիկ: 7 Ստիպով այնուհետեւ զհետ փախստեիցն Հայոց անցանէին զաւրքն Պարսից. որոց հասեալ՝ զոմանս կոտորէին, եւ զայլ ոմանս արգելեալ ի տեղի ինչ ամրոց արգելուին. որոց ոմանք հատեալ զնիզակափակ գիշերոյն⁴ պահապանացն եւ զբազումս ի նոցանէ կոտորեալ՝ գնացին ողջանդամք: 8 Եւ այգոյն ի փախստեիցն Հայոց ձերբակալ⁵ արարեալ ածին ի բանակն եւ կոտորեցին սրով, եւ զայլս բազումս արկեալ զփղաւք սպանանէին. եւ մնացորդք⁶ փախստեիցն յայլ եւ այլ տեղիս⁷ Հայաստան աշխարհիս ցրուեցան:

9 Բայց որ ի ժամուն երանելի եւ երկնաւոր կոչմանն եղեն արժանաւորք ընդ սրբոյն Վարդանայ եւ Նահատակեցան՝ են այնոքիկ. յազգէն Խորիստոռնեաց՝ երանելին Խորեն. յազգէն Պալունեաց՝ երանելի սեպուհն Արտակ. յազգէն Գնդունեաց՝ երանելին Տաճատ. յազգէն Դիմաքսենից՝ երանելին Հմայեակ. յազգէն Զաքերունեաց՝ երանելին Ներսէհ. յազգէն Գնունեաց՝ երանելին Վահան. յազգէն Ընծայնոյ՝ երանելին Արսէն. յազգէն Սրուանձտայ՝ երանելին Գարեգին: 10 Եւ որպէս շատ խուզիւ եւ բազում քննութեամբ հարցեալ եւ ուսաք զնահատակելոցն թիւս, որք ի տեղւոջ պատերազմին պսակեցան ընդ աւագ Նախարարսն՝ երկերիւր եաւթանասուն եւ վեց այր: 11 Եւ զորս յամրոցացն իջուցեալ սպանին սրով եւ կամ փղաւք կոխեցին՝ եաւթն հարիւր եւ յիսուն այր. որք լինին միահամուռ հազար երեսուն եւ վեց այր. զորոց իւրաքանչիւր անուն վարձահատոյցն Զրիստոս գրեալ պահէ ի դպրութեան կենաց: 12 Իսկ ի զաւրացն Պարսիցն, որք անկան ի պատերազմին յաւուրն յայնմիկ, զոր ստուգիւ համարեալ պատմեցին մեզ, տեղեկա-

1 Ատ. զի եւ զայս. ԲԳտ. ուղղագրել են այսպէս եւ ծանօթութեան մէջ դնում են «պակասին բառք ինչ»: 2. այսպէս. լրացնելու է թերեւս այսպէս՝ որք առ հարկի եւ ոչ կամաւ եկեալք էին, մանաւանդ զի եւ յաղագս զայլս յերկուացուցանելոյ...

2. ցանկացեալ էին

3. փախուցեալս

4. գիշերոյն

5. Ատ. ձերբակալ

6. զմնացորդք

7. Զիք տեղիս